

Բաց-դասախոսություն Եղեգի միջնակարգ դպրոցում

30.04.2015թ.

Ապրիլի 29-ին Եղեգի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ բաց դասախոսություն՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին և առաջին աշխարհամարտում սյունեցիների մասնակցությանը: Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ Հ. Հարությունյանը, Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն Գ. Սմբատյանը, Պատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայության բաժնի պետ Ա. Հակոբյանը, հյուրեր: Կազմակերպիչների խոսքով, սա ևս մեկ քայլ էր անմեղ զոհերի հիշատակը ոգեկոչելու, փաստելու, որ հիշում ենք ու պահանջում: Նշվեց, որ յուրաքանչյուրի սուրբ պարտքն է հավերժ հիշել 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը: Բաց դասախոսության շրջանակներում ելուքներով հանդես եկան Եղեգի միջնակարգ դպրոցի տնօրեն՝ Մ. Գանդալյանը, Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն՝ Գ. Սմբատյանը, թանգարանի աշխատակից՝ Դ. Հակոբյանը, Պատմական միջավայրի պահպանության, Սյունիքի մարզային ծառայության բաժնի պետ Ա. Հակոբյանը: Երաժշտական կատարումով հանդես եկան նաև դպրոցի սաները:

